ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2012 թվական թիվ 63-Ա

<<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշումը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման փոխնախարարի 2012 թվականի հուլիսի 21-ի թիվ 01/15/3783-12 գրության պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին >> թիվ 858-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությանի 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ ընթացիկ դրամաշնորհներ> հոդվածով) հատկացված 25000.0 հազար դրամ գումարից 2500.0 հազար դրամ գումարն ուղղել <Լավագույն մարզական ընտանիք> միջոցառման մասնակցությանը՝ անհրաժեշտ մարզահագուստի ձեռք բերման, կեցության և տրանսպորտային ծախսերի իրականացման նպատակով, համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ նախատեսված գումարը սահմանված կարգով հատկացնել <Լավագույն մարզական ընտանիք> միջոցառման մասնակցության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

24 հուլիսի 2012 թ.
ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի 2012 թ.
հուլիսի 24-ի թիվ 63-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի հանար ''Լավագույն մարզական ընտանիք'' մրցույթի եզրափակիչ փուլին ՀՀ Տավուշի մարզի թվով ինը ընտանիքների և մեկ պատասխանատուի մասնակցության

h/h	Ծախսերի անվանումը	Գինը /հազար դրամ/	Քանակը	Մասնակից-ների թիվը	Օրը	Գումարը /հազար դրամ/
1	Մարզահագուստ	25.345	29		-	735.0
2	Ճանապարհածախս					25.0
3	Գիշերավարձ և սնունդ	10.0	-	29	6	1740.0
	Ընդամենը	**X**	**X**	**X**	**X**	**2500.0**

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան